ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 894 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1536-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների 1-ին մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաները սահմանելու մասին» N 1536-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

2. Որոշման վերնագրից հանել «ԿԱՊԻ ԵՎ» բառերը:

3. Ուժը կորցրած ճանաչել որոշման 1-3-րդ կետերը և 10-րդ կետի «ա» պարբերությունը:

4. Որոշման 6-րդ կետում «կապի, ինչպես նաև ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական մարմինների համար

սահմանված նորմաներից՝ կոմունալ ծախսերի տարեկան ծավալները» բառերը փոխարինել «կոմունալ ծախսերի տարեկան ծավալները՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական մարմինների համար սահմանված նորմաներից» բառերով:

5. Որոշման 6[1]-րդ, 7-9-րդ կետերից և 11-րդ կետի «բ» պարբերությունից հանել «կապի և» բառերը:

6. Որոշման 8-րդ և 9-րդ կետերից հանել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի ու» բառերը:

7. Որոշման 11-րդ կետի «ա» պարբերությունից հանել «կապի,» բառը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ